ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/18, 11.03.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Էներջի գրուպ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» գնանշման հարցում

Գնման առարկան փականների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել պատվիրատուին վերացնել 03-09.03.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված մերժումը և կայացնել համապատասխան որոշում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ

որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ռաֆաել Պարգևի Աղաբեկյան
Հասցե՝ ք. Երևան, Նանսենի 15/1շ., 56բն.
«Էներջի Գրուպ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան 34/35
Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

ԴԻՄՈՒՄ - ԲՈՂՈՔ

Հարգելի՛ գործընկերներ, դիմում-բողոքի առարկա է հանդիսանում ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր հասցեում գտնվող «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից (այսուհետ՝ Պատվիրատու) «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁ-26/21 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստերի № 2 արձանագրությունը, կայացած 03-09.03.2021թ.-ին (տեղեկագրում հրապարակված է 2021-03-10 14:00:57 ից անժամկետ)՝ ըստ որի որոշում է կայացվել ք. Երևան, Լենինգրադյան 34/35 գործունեության հասցեում գտնվող «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) կողմից ներկայացված հայտը գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետը և որպես պատճառ նշել հավելված 2-ում (գնային առաջարկ) ապրանքի անվանման ոչ ճիշտ լրացված լինելը:

Հայտնում ենք Ձեզ, որ պատվիրատուի կողմից հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁ-26/21 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերում (այսուհետ՝ Հրավեր), I Մասի 1-ին կետում՝ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ բաժնում, ինչպես նաև II Մասի ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԻ հավելված 6-ի 1-ին կետի 1.1 ենթակետում, համապատասխանաբար որպես չափաբաժնի անվանում և պայմանագրի առարկա նշված է «կափյ<u>ու</u>ր» բառը, ինչը հիմք ընդունելով մեր կողմից, կազմված հայտի գնային առաջարկի հավելված 2-ում ապրանքի անվանումը նշվել է որպես «կափյ<u>ու</u>ր» (**յու**):

Միևնույն ժամանակ, սույն հրավերի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ (հավելված N 1) և ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ (հավելված N 2) – ներում որպես անվանում նշված է «կափ<u>ույ</u>ր» (**ույ**):

Հրավերում տեղ գտած վերոհիշյալ անհամապատասխանության արդյունքում մեր կողմից լրացված գնային առաջարկի հավելվածում որպես ապրանքի անվանում նշված «կափյուր» բառը, ըստ գնահատող հանձնաժողովի, համարվել է ոչ ճիշտ լրացված և պատճառ է հանդիսացել մեր կողմից ներկայացված հայտի մերժման համար:

Մենք համաձայն չենք գնահատող հանձնաժողովի որոշման և դրա հիմքով կազմված արձանագրության հետ, քանի որ գնային առաջարկի հավելվածում ապրանքի անվանումը նշել ենք նույնությամբ, ինչպես գրված է եղել գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգում՝ պայմանագրի առարկա դաշտում: Հետևաբար սխալը կատարվել է ոչ թե մեր անուշադրության կամ վրիպակի արդյունքում, այլ կատարվել է հրավերում նշված չափաբաժնի անվան համապատասխան: Ասվածից ակնհայտ է, որ այն մերժման հիմքում չէր կարող դրվել, քանզի այն լրացվել է հրավերում առկա չափաբաժնի անվան համապատասխան: Այն չէր կարող տարընթերցման առիթ հանդիսանալ, կամ նշանակել այլ առարկա, որը կտարբերվեր գնման առարկայից:

Հիմք ընդունելով վերոգրյալը,ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ պահանջները՝

Խնդրում եմ

Ուսումնասիրել մեր կողմից ներկայացված սույն դիմում-բողոքս, առնել քննության, վերացնել 03-09.03.2021թ. № 2 արձանագրությամբ կայացված մերժումը և կայացնել համապատասխան որոշում:

Կից ներկայացվում եմ

1. «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման հրավերը,
2. «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման հրավերի գնային առաջարկը,
3. «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման հրավերի № 2 արձանագրությունը,
4. Ռաֆաել Պարգևի Աղաբեկյանի նույնականացման քարտի պատճեն,
5. Բողոքարկման վճարը կատարված լինելը հիմնավորող փաստաթղթի պատճեն

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի

Գլխավոր տնօրեն **Ռ. Աղաբեկյան**

11.03.2021թ.